

Ս Ր Տ Ո Յ Տ

ԶՐՈՅՑ ԱՐՑՈՅՑՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Ա.

Այն երկիրը, որտեղ մենք ապրում ենք, կատարեալ դրախտ է: Բնութիւնն այնտեղ կարծես ամեն ճիգ թափել է իւր ամենավսեմ շնորհքը ցոյց տալու: Դժբաղ- տաբար բանաստեղծի հանճար չունիմ, որ կարողանամ թէ կարգին և թէ պերճաշուք խօսքերով մանրամասն նկարագրել մեր չքնաղ երկրի բարձրաբերձ լեռները, կանաչավառ արօտները, բիւրեղի պէս լստակ աղբիւր- ները, մշտադաշտար անտառները, թաւ ծմակները, ծա- ռերը, ծաղիկները և այն ամենը, որ մահամերձին էլ հոգի ու կեանք են շնչում: Սակայն, որ վարդի թփի տակ օձ չէ սողում, որ մանուշակի արանքում փուշ ու տատասկ չէ բուսնում, որ ոսկէզօծ արտերի մէջ որոմն չէ աճում.—Դրանք բնական են, գրանք ամեն տեղ էլ կան, միայն այդ ամեն տեղն էլ կամ մի որոշ չափով են ալդ բոլորը երևան գալիս, կամ երևալուն պէս ջնջում, անհետանում են: Խսկ մեր դրախտապատճեր երկրում այդ զաղիր երևոլթները որքան արագ են ա-

ճում, նոյնքան և աւելի արագ բազմանում են և ան-
լագուրդ տղրուկի նման ծծում մեր արիւնը և մինչև
ծուծը հասցնելով մաշում ու հալում մեր կեանքը, նա՝
ով չէ խղճահարւում ու պղծում է քնքոյշ վարդը և
առհասարակ գեղեցիկ, խնկաբոյր ծաղիկը, ով չէ հան-
գուրժում անմեղ թռչնոց թռվիչ դալալիկը, ով գար-
շում է մարգարտացայտ աղբիւրի խոխոջիւնից կամ սար-
սափում է լուսնեկավառ, աստեղազարդ երկնքից, նա
արհամարհում է գեղեցկութիւնը. իսկ ով արհամար-
հում է գեղեցկութիւնը, նա մի հրէշ է որ ոչ սիրո
ունի, ոչ խիզ, հետեւաբար ոչ բարութիւն գիտէ և ոչ
ազնութիւն:

Մեզ վիճակուել էր ալդպիսի մի շարք փծուն ա-
րարածների ճանկերում մնալ, նրանք ճգնում էին աշ-
խարհի երեսից ջնջել մեր արտոյտների ամբողջ սերուն-
դը. մի սերունդ, որի որերոյն քաղցր պատմութիւնը
մնացել էր ինչպէս վառ ճրագ մուժ գրուանի տակ:

Մեզ ոչ ոք չէր մտարերում: Մենք մխիթարուում
էինք լոկ իրարով: Սակայն մենք, որ միշտ ապրում
ենք կենսատու հասկերի արանքում, չէինք կասկածում,
որ Այն կապոյտը, որին միշտ յառած ենք մեր հայեաց-
քը, որին փառաբանում ենք ամեն օր՝ արշալոյսից սկսած
մինչև վերջալոյս, մի օր մեզ կմտարերէ և մեր տան-
ջանքին վերջ կդնէ: Մենք յուսահատուել չդիտենք, դո-
րա համար և լուռ, անտրտունջ հանդուրժում էինք
մեր անողոք ճակատագիրը:

Եւ նա՝ ով յոյս է տածում երկնքին և հաւատում
է, որ իւր սև օրուան կլաջորդէ մի պայծառ արշալոյս
և աստեղազարդ այն կապուտավառ գմբէթում կտես-
նէ մի վառուած Լուսաբեր, նա մի օր ալդ պսակը
կգունէ, սակայն ալդպիսիին մնում է անյողդողդ մնալ, սի-
րել իւր հալբենիքը և կռուել կեանքի ամեն դառնա-

ղէտ հոսանքների դէմ։ Դմ լուսահոգի պապն ասում էր. «ամեն կոռուի վերջը յաղթութիւնն է»։ և ճշմարիտ առանց կոռուի յաղթութիւն չկալ։ Սակայն կոռուողը համբերութեամբ պէտք է կոռուէ։ Տենդոտ մարդիկ անպարտ չեն մնալ։

Մեր շինածը չքանդէք, լիշում եմ պապիս խօսքերը, մեր հիմքն ամուր է, բայց եթէ հանգամանքները պահանջեն, որ մեր շինածը փոխուի, այն ժամանակ նրան փիսիսցէք, սակայն ամեն մի նոր շինութիւն դրէք նոյն հիմքի տեղը։

—Այժմ համառօտ պատմեմ թէ՝ որտեղ էր շինուած մեր բոյնը, ով վերջը մեր գլխին տէր դարձաւ և թէ ինչպէս ալդ ապիկար տիրոջից կարողացանք ազատուել։ —Ճշմարիտ է. նա՝ ով հանգամանքներն իրան խոնարհեցնէ, շատ մեծ է աշխարհիս երեսին, սակայն ով ալդպէս չկարողանալ՝ պէտք է տանէ հանգամանքների պահանջը և ջանալ՝ նրանց առաջ գէթ շընկճուի հոգւով։ Չարի հետ բարին միասին են ծնւռում, ապա երար հետ կոռուելով նետում են աշխարհ և իրաքանչիւրը նրանցից ճիգ է թափում իւրովսանն առաջ տանել, մեզ մնում է նրանց լաւ հասկանալ և ոչ մի արտաքինով չխարբուել. ու անձնատուր չլինել մահաբեր չարութեան։ Չարութեան գեղեցկութիւնը արտաքինումն է, բարութեանը ներքինում։ Ոչ մէկի առաջ էլ չպէտք է երերալ, քաջ պէտք է մնալ, երկուսն էլ լաւ ուսումնասիրել, ապա լաւին հետևել։ Մենք մի շատ նեղ վիճակի մէջ էինք, հանգամանքները միշտ չարն էին քերում մեզ։ Սակայն, ինչպէս ասացի, մեր ցեղի արիւնը անարատ է, ուստի և մենք չարութեան առաջ չընկճուեցանք։ Ընդհակառակը մենք միշտ կուռում էինք։ Եւ կուռում էինք, լուսալով, որ չարութիւնն էլ վերջ կունենալ և մենք վերջապէս ազատ շունչ կքաշենք։

Դժբաղտաբար մեր կոփւը դարձաւ լարատե, մեր ճակատագիրը միանգամայն անողոք էր, ոչ մի տեղից սըրտագին օգնութիւն չէինք տեսնում: Արիւն թափելը, սիրելիների գիակներ գրկելը մեզ համար սովորական երևոլթներ դարձան:

Երբեմն մէկի մահը միւսին ազատութիւն է. մի օր ինձ այսպէս ասաց իմ լաւ բարեկամ Սոխակը:— Չարելից մահն անխուսափելի է, աւելացրեց նա:— Ալգակը էլ եղաւ մեզ համար: Ահա թէ ինչպէս:

Բ.

Արտոյտներիս գլխաւոր բնակավայրը արտերն են: Այն արտը, որի մէջ մենք ապրում էինք, ընկած էր մի բարձր սարի ստորոտում: Վերև ու ներքև, աջ ու ձախ նա համարեա շրջապատուած էր բազմաթիւ գետերով, առուներով ու աղբիւրներով: Գարնան ու աշնան մեր երկիրը ծածկւում է կանաչ թաւիշով, իսկ ձմեռը միայն հանգստանում սպիտակ սաւանի տակ:— Կար ժամանակ, որ նրան իշխում էին մեր պապերի սղապերը, մեր քաջարի և խելացի արտոյտները, իսկ ալժմ վատ հանգամանքների շնորհիւ նա մնացել է օտարի ձեռքում. և Բնչ էք կարծում. ում ձեռքում, ում իրաւունքի տակ. ահ, դժուարանում եմ ասել. Բուփ, գարշակ, աւերակասէր Բուփ: Եւ այն օրուանից, երբ նա մեր իշխանների գալիսոնն առաւ իւր ձեռը, մեր դրութիւնը դարձաւ դժոխային:

Ինքը, ալդ լպիրշ Բուն ապրում էր մեր երկրից հեռու, ընդարձակ ծովերի մօտ: Իւր ստոր արբանեակները, որ միւնոյն է թէ իւր հաւատարիմ պաշտօնեա-

ները թափուել էին մեր սիրահեղ արտի խորքերը և սկսել գիշեր ցերեկ ծծել մեր արիւնը և կլանել մեր ամբողջ քրտինքի պառուղը:

— Այսպէս լսիր ագռաւը մի առանձին տէր էր, դաժան կտցահարը առանձին պաշտօնով առանձին տէր, ուրիշները նոյնպէս։ Կոռւել. ախ, քանի մէկի հետ կոռւել։ Թափառաշրջիկ կոռւնկները մի տեղ հանգիստ չունին։ Հարաւից հիւսիս էին թափառում և կամ ընդհակառակն։ Այդ միջոցներին պէտք է տեսնել նրանց արած կողոպուտը, նրանց հասցրած վնասներն ու նրանց պատճառած աղէտները, ո, սարսում եմ, երբ այդ բոլորը լիշում եմ։ Այդ ալլանդակ, անհոգ, անսիրտ արարածներից, որ ամեննեին հանգիստ չունէինք, գեռ չազատուած ընկնում էինք ուրիշների ճանկը և կամ արնաթաթախ ազատում կամ միանդամայն կուլ գնում։ Կաշաղակներին հօ ամբողջ աշխարհը գիտէ, որ ապրելու համար ոչ մի որոշ տեղ չունին, աշխատելու էլ ոչ մի որոշ գործ։ Իբրև գող, աւազակներ ամեն օր ընկած էին մեր երկրի այս և այն կողմերը և ով մեզանից մի բոյն էր շինում, առաջ իրանք էին ներս մտնում և պատահում էր, որ ամեն կեղտոտութիւն անելով, թողնում, դուրս էին գնում, պատահում էր, որ առօք փառօք նստում և իրանց ալդ բոյնի տէր էին հոչակում։ Խեղճ արտոյտներս, որ ոչ իրաւունք ունէինք խօսելու, ոչ էլ զէնք պաշտպանուելու, ստիպւում էինք լուել և ամեն ինչ համբերութեամբ տանել։ Ի՞նչ անէինք։ Ել առանձին ոյժ չունէինք։ Մեր ոյժը մեր թեւերի մէջն էր, մեր քաջութիւնը աշխատութեան և շնորհքի մէջ։ Իսկ դրանք, ախ, եթէ տեսնէիք նրանց ժանտ թևերը, թունաւոր կտուցները, եղունգները, գաժան աչքերը... Ե՛, որ մէկն ասեմ, որ մէկը պատմեմ։ Եւ դրանք Բու իշխանի թիկնապահներն էին։

Բուն ապրում էր հեռու, ծովերի մօտ, աւերակ-ների մէջ, իսկ թիկնապահները գրեթէ մշտապէս մեր մէջ: (Լաւ թիկնապահներ են, այնպէս չէ):

Դրանց վարմունքից պատմեմ մի անմոռանալի գէպք, որ լիշելով ամբողջ մարմնով սաղսուում եմ: Այդ գէպքը թէպէտ անչափ աղէտալի, բայց մեր փրկութեան գուռը դարձաւ:

— Աշնանալին մի օր արևը մօտեցել էր արևմը-տեան հորիզոնին և շիկնած ճառագալթները սփռել համատարած բնութեան վերայ ու ոսկեզօծել թէ թաւ ծառերի սաղարթները և թէ բարձր սարերի կատարները: Աղբիւրներն անուշ սիւգերի քաղցր վզզոցին ներդաշնակ խոխոջալով առաջ էին թաւալում մանրիկ կոհակները, որոնք գգուելով արևի վերջին ճաճանչները, ադամանդների մի ամբողջ փունջ դարձած հեղանազ պարերով սլանում էին ջրերի հոսանքների հետ: Այս, որքան երջանիկ են նրանք, մտածում եմ ես, որ չեն տեսնում այս լպիրշ՝ թիկնապահներակ երեսները և սահում են գէպի դալար մարմանտ, գէպի սար, գէպի ձոր:

Եթէ դու իմանալիր, լանկարծ ասաց ինձ աղբիւրը, թէ այս ոսկէ ճաճանչների հետ ուրիշ ինչ տղմեր եմ գգուել, եթէ դու իմանալիր, թէ մեր առջեսում մեզ ինչ անդունդ է սպասում, կամ ինչ ժայռերի ու մացառների հետ ենք կռիւ մղում, դու այն ժամանակ կը հասկանալիր, որ մեր ջրերի ամեն մի կաթիլը դառնութեամբ զեղուած արտասուք է, մենք գնում ենք առաջ չիմանալով, թէ՝ մեզ ինչ պատուհասներ է չսպասում և որ ամենացաւալին է, մեզ չէ վիճակուած նորից վերադառնալ մեր հալրենիքը:

Նշմարիտ է խօսում աղբիւրը, մտածեցի ես և նըրան մխիթարելու համար իմ տխուր դալլալիկը կցորդեցի նրա հեզիկ կարկաշին:

— Ալդ միջոցին յանկարծ լսեցի իմ կնոջ դալլալը,
որ մերթ բարկացած, մերթ աղիողորմ ձայնով հնչեց-
նում էր արտի մի հեռաւոր անկիւնում։ Ես շեշտակի
սլացալ դէպի նա, ոհ, արիւնս բորբոքուեց ինչ որ տե-
սալ։ Մի խումբ գարշակ կտցահարներ վազում են իմ
կնոջ ետևից և կամենում են բռնել նրան։ Կինս ինձ
տեսնելուն պէս սլացաւ, ուղղակի թռաւ ու ընկաւ իմ
գերկը։

Ի՞նչ պատահեց քեզ, հարցը նրան։

Ահա, նալիք, նրանք ինձ են հետևում, փախչենք,
գնանք մեր բոլնը։

Կնոջս հետ թե թեսի տուած միասին փախ-
չելն ու տուն հասնելը մէկ եղաւ։ Հարևաննե-
րին ասացինք եկող կտցահարների մասին և դեռ մեր
խօսքը չվերջացրած, յանկարծ նրանք երևացին։

Բաւական է նրանց ամեն լպրշութիւնը այսպէս
լուստեամբ տանենք, ասացի ես և դրդեցի հարևան-
ներիս՝ դիմադրել դրանց և եթէ կարողանանք մինչև
իսկ կոտորել։

Ամեն տեղից լսեցի խրախուսանքի ձայներ։ Եւ
կտցահարները հասած ժամանակ՝ արդէն հաւաքուել էին
մեր արտոյտներից շատերը։ թէ «կանալք» և թէ «տղա-
մարդիկ»։

Անիրաւնե՛ր, գոչեցին նրանք և կամեցան ներս
խուժել։

Նրանց ալդ արգելուեց։

Ի՞նչ էք ուզում, ասացի ես։

Ո՞վ է ձեզ իրաւունք տուել ալդպէս ձայներով
թնդացնել այս արտերը։ գոչեցին նրանք։

Արտերը մերն են, ձայնն էլ Աստուծոյ տուած
շնորհն է, պատասխանեցին մեր արտոյտներից շատերը։

Սուտ էք ասում, արտերը ձերը չեն, խրոխտաց

նրանց մեծաւորը և շարունակեց. հեռու կացէք, անզգամներ, ալս բոլորը մեզ են պատկանում, հեռու, թողէք ձեր բոլոները, ձեր կանալքը, իսկ ինքներդ կորէք: Անիրաւ, գարշելի՛, դոչեցին մեր կանալք:

Այդ միջոցին մեր անվեհեր արտոյաները իրար թե թեսի տուած իրար գիրկ բռնած, թափուեցին նրանց վերալ և ոմանց ջարդելով, ոմանց վիրաւորելով փախցրին մեր երկրից:

Այնուհետև մենք վճռեցինք դրանց հետ միշտ այդպէս վարուել, տեսնելով, որ ալլապէս նրանք մեզանից ձեռք չեն վերցնում:

Սակայն այդ դէպքից լետոյ անցաւ քիչ ժամանակ և ահա Բու իշխանի բարձրագոյն հրամանով սկսեցին ագուաւների, կտցահարների, կաչաղակների և ալլ խըմբեր խմբերի ետևից, հրոսակների նման գրոհ տալ դէպի մեր սուրբ հալրենիքը: Մենք այդ տեսանք և երկիւղից ամենսին չերերացինք: Մեր վճիռը սուրբ վճիռ էր: Վճուել էինք կամ միանգամայն ջնջուել կապոյտ երկնքի ստուերից, անհետանալ անտարբեր աշխարհի երեսից, կամ եթէ ապրել, ամենսին թոյլ չտալ, որ այդ լախուռն, այդ գարշակ բուերն ու կտցահարները մեր սուրբ, անարատ հողը պղծեն: Մեր վահանը առ երկինք տածած յուսն էր, մեր գրօշը հալրենիքի սէրը, մեր զէնքը անյողդողդ հաւատը:

Հրոսակների այդ խմբերը գիւական կատաղութեամբ թափուեցին մեզ վերալ և տեղի տուին արիւնահեղ կոտորածների, Հազարաւոր արտոյտներ թափեցինք մեր նուիրական երկրի վերալ և ամենսին անձնատուր չեղանք: Կոիւը տեսեց մի քանի օր: Մեր զաւակների, ամուսինների, քոլերի, եղբայրների ու ծնողների անըիծ արիւնով ներկեցինք մեր գաշտ, մեր արտ, մեր սար, մեր ձոր և ամեն մի քար ու թուփ, որ պաշտելի

ու խնկելի են մեզ համար։ Մեր պատիւը, մեր պանձալի անունը աշխարհ փռեցինք և անզգամի առաջ հոգւով չընկնուեցինք։

Այնուհետև շատ տեսակ լուրեր ստացանք, Որպէս թէ մեր դաւանակից այլ թռչուններ կամենում են մեզ փրկել և ազատել այս դաժան գրութիւնից։ Մենք էլ վճռեցինք նրանց մօտ խնդրողներ ուղարկել և հալցել նրանց օգնութիւնը։ Եւ խոստումների ձայն շատ լսեցինք, բայց գործի շաշիւն ամենաին։

Պ.

Այս և այն թռչունների օգնութիւնը խնդրողներից մէկն էլ նուաստու էր։

Մենք՝ նախ գնացինք Արծիւ թագաւորի մօտ։ Պատմեցինք մեր գրութիւնը, մանրամասն ասացինք թէ ինչ պէս խլում են մեր ձեռքի ամբողջ վաստակը, մեր քըրտնքից բղխած պտուղը, ինչպէս տանջում, նեղացնում են մեզ և մեր ամուսիններին և քոլրերին, ինչպէս կոտորում, ալրում են մեր զաւակները և պղծում, աւելում մեր այն ամենը, ինչ որ սուրբ, ինչ որ նուվրական է և այլն և ալլն։

Արծիւը ամենայն մեծահոգութեամբ ընդունեց մեզ, սիրտ տուաւ և խոստացաւ անպատճառ օգնել։

— Եթէ գուք մեզ չօգնէք, ասացինք մենք, եթէ շուռ գաք այն երկնքից, որին նայում ենք թէ գուք և թէ մենք, այն ժամանակ, հաւատացէք, որ մենք կկոռուենք միայնակ, մեր երակների արիւնը կթափենք մինչև վերջին կաթիլը և կամ կազատուինք այդ բռնակալ Բուհց, կամ երկնքի առաջ մեր անմեղ արեան պա-

տասխանատւութիւնը թողնելով ձեզ վերալ, վերջ կը-
դնենք մեր ազնիւ և անբիծ կեանքին:

Ամենասրտաշարժ խօսքերով մեծափառ Արծիւը մը-
խիթարեց մեզ և խոստացաւ անպատճառ օգնել և միան-
դամալն ազատել բռնակալ իշխանաւորի ձեռքից:

Վերադարձանք: Ճանապարհին պատահեցինք Սի-
րամարգին, այն թռչունին, որ բովանդակ աշխարհը ապ-
շեցրել է իւր գեղեցկութիւնով:

Այդ ուր էք գնում: Հարցրեց նա:

Գալիս ենք ձեզ մօտ, յարգելի Սիրամարգ:

Խնձ մօտ ինչ ունիք, ասաց նա մի առանձին քմա-
հաճութեամբ:

Օգնութիւն, շեշտեց նա և խօսքն իսկոյն փոխեց,
նայեցէք իմ փետուրներին, որքան գեղեցիկ են:

Նա բացեց իւր պոչի ծալքերը և գոյնզգոյն փե-
տուրները ծածանեց օդի մէջ:

Ագռաւների սովորութիւն է երբեմն սիրամարգի
փետուրներ հագնելը, մենք մեր փետուրներն ունինք
և շատ գոհ ենք նրանցից, բայց իմացէք, որ մեր սիրտը
աւելի գեղեցիկ է:

Սակայն իմ փետուրները... ասաց սիրամարգը, մեր
խօսքն ընդհատեց և հեշտասէր յաւէրժահարսի նման,
առանց մի պատասխան տալու թողեց ու հեռացաւ:

Ա՛հ, հառաջեցինք մենք ակնապիշ նրա հետքը
զննելով:

Նա իւր արտաքին պաճուճանքով շլացած ամենևին
չէր էլ կամենում մեր ձախնը լսել, ուր մնաց թէ մեր
վէրքերը շօշափել և բժիշկ օգնական հանդիսանալ, ա-
սաց ընկերներիցս մէկը և նորից մի խոր հառաջ արձակեց:

Մենք շարունակեցինք մեր ճանապարհը և ահա
որտեղից՝ չիմացանք մեզ հանդէպ եկան ծանրաշարժ
սագերը:

Բարեւ:

Բարեւ:

Ուր էք գնում. հարցրեց սագերից մէկը:

Բժիշկ որոնելու:

Ի՞նչ է, գլխացաւ ունիք:

Համարեա գլխացաւ:

Գլուխներդ խրեցէք սառը ջրի մէջ, ցաւն իսկոյն կանցնի:

Հմմ... ժպտացինք մենք դառնութեամբ և ամեն ինչ լրջօրէն պատմեցի նրանց:

Օ՛, սիրելներ, մենք ձեզ օգնել չենք կարող, մենք Հոռվմն ազատեցինք՝ բաւական է, լաւ որ իմանաք ալդ էլ «փոշմանել ենք», մեր երախտիքը մոռացել են:

—Եւ առանց «մնաս բարե» ասելու, սագերը խառնիճաղանձ ձայներով թողին մեզ ու հեռացան:

Գնում ենք, գլխակոր, մամալոր: Սրտերիս մէջ բարակ թելերից ծործոր արիւն է կաթում. էլ ում գանդատինք: Ծանր ու լուզիչ խոկմունքներում սուզուած, մոլորուած քայլերս առաջ ենք տանում և լանկարծ պատահում ենք կարապին:

Բարեւ:

Բարեւ:

Ա՛խ, լսեցի ձեր մասին, հաւատացէք, որ շատ և շատ լացի. խեղճեր, խեղճեր, ինչպէս էք դէմ կենում, ախ, որքան ծանր է, որքան դառն. ասաց կարապների աւագը և երկար վիզը տատանեց աջ ու ձախ:

Տանումենք, լարգելի կարապ, ի՞նչ անենք, եթէ ձեզ պէս զօրեղ հարեանները մեզ օգնեն, այն ժամանակ իհարկէ մեր այս անարդ լուծն էլ քիչ կըթեթևանալ: Ճշմարիտ է, ասաց կարապը, ես ինքս մտածում եմ. ախ, շատ եմ ցաւում, շատ: Դուք հաստատ լոյս ունեցէք, որ ալդ անիրաւնները եթէ մի օր երևան մեզ մօտ,

նրանց իսկոյն կխեղղենք մեր լճակների մէջ։ ԱՌխ, ցաւում եմ, շատ ԴԷՇ, մնաք բարև, մենք կանենք, կանենք։

Կարտապի պատասխանն էլ այս էր, նրա հասցնելի օգնութիւնն էլ ալսպէս էր։

ՈՇ, մեր լուսը միայն մեզ վերալ լինի, ասաց ընկերներիս մէկը արտասուախառն ձայնով։

Ալո, մեզ վերալ ձայնակցեց նրան մի ուրիշը։

Տխոնւր, աչքերս արտասուքով լճացած, մինչև իսկ քաղցած, գնում ենք լուռ, անտարբեր բնութեան գըրկում, մեր մտքերը սաւառնում են դէպի դարաւոր անցեալը և սրտներիս ճնշող արիւնը կաթ կաթ մեր աչքից գլորում։ Ոչ մի տեղից չենք լսում սրտառուչ ձայն, ոչ մի տեղից չենք տեսնում մեկնած կարեկից ձեռք. ախ, երկինքն էլ լուռ, անխօս ականատես է մէկի հըր. ճուանքին և հազարաւորի լացին։ Ո՞վ երկինք, երբ պէտք է տեսնես մէկի ընկճուկլը և գրանով հազարաւորի բարձրանալը։

—Ալսպիսի թախծալի և մաշող մտորումներով գընում ենք։ Նատերի բաղտն ենք տեսնում, շատերի ուրախ ժպիտը և աւելի լուզում ու աւելի վառում։

—Անբաղտ իմ հալրենիք, ո՞ր մեղքիդ համար կըրեցիր ճակատիդ՝ ալդ դառնութեամբ զեղուած ու թոյնով ներկուած գիրը, ո՞ր յանցանքիդ փոխարէն ալդ անարդ շղթաները ժառանգեցիր տարաբաղտ որդոցդ համար, ահ, ինչու մի ըոսէ գումժն ու խիղճը չհանեցիր սրտիցդ և ապիրատ այս արարածների մէջ չպահեցիր երաւունքներն ու պապերի թողած բոյները, որ գել ժպիհեց անարատ ստինքդ վալրենիների ապաստան շինել և պանծալի անունդ նշաւակի առարկալ դարձնել։ Ուր են տածած լոյսերդ։ Մէկն զբաղուած է իւր զարգարանքով, մէկն իւր ջրարշաւով, միւսն իւր պալատ-

ներով և նրանցից ոչ մէկի սրտում արձագանք չի լըս-
տում թշուառ որդւոցդ հառաջներին։

Այսպէս՝ դառնութեամբ զեղուած ու վառուած մը-
տածում էի ես, երբ յանկարծ իմ յանդիման եկաւ ըն-
դարձակ մի ծով։ Ծովի ափին, ահագին տարածութեան
վերալ թափուած բազմաթիւ բոյներ։ Ահա մէկ տեղ
բուերի ամբողջ երամներ, ահա և մեր արխ.նակից ար-
տոլտները։ Անշուշտ այստեղ է մեր տէր Բուի ապարան-
քը, որտեղ նա գիշեր ցերեկ պահուած է և չգիտէ թէ-
դրում ինչ է կատարւում, կամ եթէ գիտէ տալիս է
մոռացութեան։

Մենք մտանք ալդ ահարկու վալրը, որտեղ այնքան-
բոյներ կան ընկած։ Առ ժամանակ մենք ապշել էինք,
չգիտէինք թէ ինչ տեղ է ալս, բայց երբ մենք հարց-
րինք, մեզ ասացին, որ սա թռչնոց քաղաք է և իսկա-
պէս այստեղ է ապրում մեր տէր՝ Բուն։

Այս լաւ է, մտածեցի ես և իսկոյն մտաբերեցի, որ
այստեղ է և մեր արտօլտների ընդհանուր ներկայացու-
ցիչը։ Նախ պարտք համարեցինք գնալ նրա մօտ։ Ո՛խ,
նրա անունը, որ այնքան սիրելի է դարձել մեր բոլոր
արտօլտների մէջ։ Ո՛րքան մեծ փափազով էի ուզում
նրան տեսնել։ Նա, որ մեր ընդհանուրիս հալրն է, կա-
տարելապէս փոխարինում է մեր երկու անմահ և պաշ-
տելի հալրերին, որոնցից մէկը ապրում է մեզանից քիչ
հեռու «մեծ սարի» ստորոտում, իսկ միւսը, մեր չար-
բաղտից, արդէն կնքել է իւր երկրալինը և հանդիսա-
պառկում է բնութեան լուռ, խոնաւ գրկի մէջ։

Բաղտի բերմունքով գնացի և Հալը Արտօլտին-
տեսայ։ Երբ մեր երկրի դրութիւնը պատմեցի նորան,
նա սաստիկ տիսրեց և խրոխտահալեաց աչքերից արտա-
սուքն ոռոգեց դժգունած ալտերը։ Ա՛խ, որքան խանդ,
որքան աւելւն կար նրա մէջ։ Առ ժամ լոեց և ապա-

դարձաւ և սրտաբեկ ձայնով ասաց. հանգիստ եղէք,
քիչ է մնացել, շուտով կլսենք փրկութեան օրհներգը,
ոհա և մեր արշալուսը բացւում է, շուտով կծագի և
մեր արևը:

Թ.

Հետևեալ օրը սոսկալի օր էր. Բու իշխանի ալդ
ահագին քաղաքը պատերազմի դաշտ դարձաւ. թէ բուեր,
թէ կտցահարներ և մինչև իսկ վայրագ ագռաներ ու
կաշաղակներ թափուել, կոտորում էին մեր արտոյտնե-
րին. Արիւնը գլխիս խփեց, նետուեցի նրանց մէջ և մի
քանի ժամուալ ընթացքում մի շարք կտցահարներ ու
բուեր անշնչացրած գլորեցի գետնին. Խօսքեր պէտք է
ունենալ ճշտիւ նկարագրելու այն ահեղ մարտը, որ մը-
զում էին մեր փափկանունները ալդ լակերշ անօրէնների
գէմ. Բուի ալդ ահոելի քաղաքը ամբողջովին արիւնով
ներկուեց. Ինձ թւում էր թէ՝ մեր պանծալի պապերի
ուրուականները շրջում էին ալդ տեղերում և ամենքին
էլ դափնեալ պսակներ մեկնում. Բուն, որ աչքերը ծած-
կած, իւր ապարանքի մէջ պահուած, դուրս չէր գալիս,
լսեց մեր քաջարի արտօլների կռիւը, սարսափեց և քա-
նի արևը իւր պայծառ ճառագալթները չէր սփռել աշ-
խարհի ամենամութ անկիւնները, նա իսկոյն հրաման
արձակեց և լալտարարեց, որ մենք ազատ ենք, որ այլ
ևս մի կտցահար, մի կռունկ կամ մի այլ ժանտ թուզուն
երաւունք չունի մեզ նեղացնել, մեր մազին անգամ
գիպչել: Ալդ խոստումին թէպէտ շատ էլ չհաւատացինք,
քայլ ևս շատ երկիւղ չունեցանք: Մենք արդէն սո-
վորեցինք կռուելը և մինչև իսկ վճռեցինք կռուել,
մինչև ձեռք կըերենք ազատ կեանք, ազատ իրաւունքներ
և. Աստուծոյ շնորհաց լուսի հանգիստ վայելումն:

Բայց և այնպէս տէր բուի տուած ալդ ծաղկէ մի փնջովն էլ բաւականացած վերադարձանք մեր հայրենիքը։ Հարիւր հազարաւոր արտոյտներ, որ տարագիր էին եղած աշխարհի ալս և այն անկիւնները, նոյնպէս վերադարձան իրանց տեղերը։

— Գնացինք հայրենիք։ Ա՛չ, Բնչ հայրենիք։ Ոչ միայն մեր բոյները չկային, այլ և նրանց հետքերն անգամ անհետացել էին։ Ամենուրեք խոպան, ամենուրեք փլատակ, ամայի և ամեն անկիւն արիւնոտ։ Մենք նախ և առաջ մեր արիւնակիցների բոլոր դիակները իրըև սուրբ մասունքներ, յանձնեցինք հողին և նրանց գերեզմանները դարձրինք ուխտատեղի։ Ապա սկսեցինք նոր բոյներ շինել, ամեն տեղ նորոգել, ծաղկեցնել և մեր ազատուած հայրենիքին նոր կեանք, նոր շունչ տալ և նոր պաճուճանքով զարդարել նորան։

— Սակայն բռնութեան կապանքները հազիւ ջախջախուած, բռնակալի ձեռքից հազիւ ազատուած, սկսեցին նոր ցեցեր երևալ, այն էլ դժբաղտաբար ուղղակի մեր միջից։

— Այս և այն կողմից արտոյտներ եկան։ Դրանց մասին ամենակին չէինք լսել, ոչ մի տեղ չէինք տեսել, բայց եկել էին և ամեն մէկը իրան ալս և այն տեղի իշխան էր համարում, այս և այն բոյնի գլխաւորը և ալլն և ալլն։ Եւ ոչ մէկն էլ նրանցից համեստ պատառվ չէր բաւականանում, միշտ ձգտում էին դէպի բարձր, դէպի վեր։ Մէկն ասում էր, որ ինքը իմաստուն մարդ է, որ մեզ համար շատ է խօսել, շատ է գրել, մի ուրիշը բացականչում է, որ ինքը հարուստ էր, ունեցածը փշացրել է մեզ համար, իսկ շատերն ուղղակի գոռում էին, որ մենք տղէտ ենք, լիմար ենք և իրանք եկել են մեզ կառավարել և լուսաւորել։ Խօսքով առաջ բուերն ու ագռաւներն էին մեզ նեղացնում, տանջում,

շարչարում, վերջն էլ ալդ անառակները հանդէս ե-
կան։ Մեր արիւնակիցներն էին, բայց անառակ արիւ-
նակիցներ։ Այնու ամենայնիւ, դրանք ոչ մի նպատակի
չկարողացան հասնել, վասն զի մենք արդէն շատ լաւ-
ճանաչում էինք գործողին և խորեբային։ Մենք դրանց
փախցրինք և մեր երկրի զեկը լանձնեցինք ազնիւներին,
խելօքներին և իսկական գործողներին։ Խարեբաների
գիմակները պատռեցինք և մեր ձախնը բարձրացրինք
լոգուտ մեր հայրենիքի, յօգուտ հալրենակիցների։

Ե

Ալդ օրից անցաւ ուղիղ տասը տարի։ Մի գեղեցիկ
օր լուր առանք, որ Բու իշխանը հոգևարքի մէջ է և
նրա դաւանակից ստորագրեալները սաստիկ կոտորած են
մղում իրար գէմ և մինչև իսկ պատրաստուում են ա-
ւերակ դարձնել տէր Բուի ապարանքը և նրա ամբողջ
իշխանութիւնը։

Կոուի հետևանքը ալդպէս էլ եղաւ։ Բու իշխանը
տապալուեց. իշխանութիւնն իսպառ փչացաւ, նրա ամ-
բողջ երկերը բաժին-բաժին եղաւ և անցաւ աշխարհի
երեսին ապրող ալս և այն թռչունների ցեղերին։ Մեր
երկերը, որ արդէն սկսել էր ծաղկել, ժամաց, անշուշտ
լոյս տալով, կարճ ժամանակում միանգամայն փայլելու։
Մենք կտցահարների, ագռաւների և միւսների հետ նե-
րողամտութեամբ վարուեցինք, ջանալով նրանց ևս հան-
գիստ, խաղաղ և աշխատասէր կեանքին սովորեցնել։
Մեզ հարկաւոր էր իշխան և վճռեցինք ազնիւ իշխա-
նազուններից մէկին հրաւիրել։ Մեր վճիռները շուտ էին
կայանում։ —Վճռուեց Բազէ իշխանին հրաւիրել։ Ալդ-
պէս էլ եղաւ։ Ալդ բաղձանքին էլ հասանք։

Մի օր ամպրոպի ձայնով աշխարհը դղբդաց և աշխարհի ամեն անկիւններից սկսեցին մեր գլխին տեղալ աւետեաց ուրախավառ ողջուններ։ Մեր երկիրը հետըզհետէ գրախտի պատկեր ստացաւ։ Ես, նուաստս, վալելում էի Բագէ իշխանի խորին համակրութիւնը և քիչ ժամանակից յետոյ գարձալ նրա աւագ ատենադպիրը։ Հարկ եմ համարում հազարաւոր շնորհաւորութիւններեց գէթ մի քանիսը կարդալ, որոնք ուղարկուած են այս և այն թռչունների իշխաններից և որոնք բնորոշում են նրանց՝ սկզբում և վերջում բռնած դիրքը։ Ահա նրանք։

1) Սրտի խորին բերկրութեամբ շնորհաւորում եմ Զեղ Զեր գահի նոր շունչ առնելու առթիւ։ Յուսով եմ, որ մեր երախտիքը չէք մոռանալ։ Մենք որքան կարողացանք, արինք, ալսուհետեւ էլ արէք դուք որքան կարող էք։

Միշտ Զեղ բարեկամ Արծիւ։

2) Ա՛խ, երանի մի այնպիսի գրիչ ունենալի, (լաւ լսեցէք) ո՞ր ինքն իրան գրէր իմ սրտի անկեղծ զգացմունքները (կեղծաւոր), բայց իմ ժողովուրդը ալդ էլ կստեղծէ, միայն ուզում եմ ասել, որ շատ և շատ ուրախ եմ, ինդրում եմ բարեհաճէք ինձնից փետուրներ տանել, լուսով եմ ինձ չէք մոռանալ, մանաւանդ պարահանդէսների, առաւել ևս դիմակահանդէսների ժամանակ։

Զեր սիրահեղ Սիրամարգ։

3) Ա՛խ, որքան ուրախ եմ, որքան։ Եւձեղլաւ լալտնի է, որ մենք Զեր անկեղծ ցաւակիցն ենք եղել։ Որտեղ խեղճերին օգնել էր հարկաւոր, մենք չենք զլացել և մենք կշարունակենք ալդպէս լինել, մանաւանդ ձեղ համար։ ինդրում եմ իմ աղջիկն հարս առնէք, մենք խնամի կդառնանք և



իրար հետ աւելի սիրով ու աւելի լարգանքով կը-
լինենք: Կարծեմ իմ ասածները պարզ են և ան-
կեղծ:

Զեր հրաւերին սպասող Կարապ:

4) Հռովմի սլահապաններս մեր գլխաւորով հան-
գերձ ողջունույ ենք Զեղ՝ Զեր լաղթութեան առ-
թիւ, եթէ իմանալիք, որքան արտասուք ենք
թափել Զեղ համար, որքան ճանճեր ենք Փչաց-
ըել և որքան էլ ջրեր, լճակներ ենք պղտորել մեր
երախտիքը չմոռանաք: Դիտեմ, որ գուք բարի էք:

Զեր աղօթարար Սագ:

5) Մենք գիտէինք, որ Դուք պէտք է լաղթէիք
և մի օր պէտք է այս փառքին հասնէիք, ուստի
և Զեր գործերի մէջ սկզբում չխառնուեցինք, սա-
կայն այժմ լուսով եմ անկեղծ բարեկամներ կլի-
նինք և իրար չենք մոռանալ:

Զեղ լարգող Կաքաւ և Սարեակ:

6) Ես մի քանի անգամ վազեցի Զեղ օգնելու,
ձկարողացալ հասնել, մի անգամ էլ ճանապարհին
ընկալ գարեջրի տակառը և շատ ուշ դուրս եկալ,
այսուհետև մենք միշտ բարեկամ կլինինք:

Զեր խոնարհ ծառալ Բաղ:

Իսկ ինչ մնում է սոխակներին և ծիծառներին՝ նը-
րանք անձամբ թռան մեր արտոյտների մօտ և լայտ-
նեցին իրանց անչափ ուրախութիւնը: Որ նրանց փալ-
փալանքն ու ողջագուրանքը անկեղծ էին, ալդ ճիշտ է,
վասն զի մենք նրանց լաւ գիտէինք:

Բազէ իշխանի հրամանով մի մեծ խնջուք պատ-
րաստուեց, որին մասնակցեցին աշխարհի ամեն կողմից
եկած արտոյտները: Սեղանի բարձր կողմում նստած էր
ինքը Բազէ իշխանը, իսկ նրա աջ ու ձախ Սոխակն ու
Ծիծառը. ապա կարգով բոլոր նշանաւոր արտոյտները:

Թէ լաւ ուտում էին ու խմում և թէ տաք-տաք ճառեր արտասանում։

Նատերը խօսեցին։ Խօսեց և Սոխակը և իւր թովիչ խօսքերով ամենքի վերայ թողեց դիւթիչ տպաւուրութիւն։ Երբ երկար ցկեցցէ՞ն գլրդաց, նա խօսքը վերջացնելով դարձաւ նուաստիս և ասաց. լիշում ես, Արտոյտ եղբալը, ես մի օր քեզ խասացի թէ՝ «երբեմն մէկի մահը միւսին ազատութիւն է»։

Այս, ասացի ես և աւելացրի. բոլոր օգնողներին շնորհակալ ենք, բոլորի անուններն էլ, իրանց բարի գործերով հանդերձ, այս օրուայ անցքի հետ, մեր արտոյտների պատմութեան մէջ ոսկի տառերով կտպուին։

ԹՈՒՄԱՆԸ

